Վիպասանութիւն առման Ս. Գէորգ Եկեղեցւոյ. որ ի Մակեդոնիայ ի Փիլիպուպոլիս. ի ձեռաց ազգին Յունաց

Ի Զորորդ Սուլթան Մէհմէտի ի քսան եօթներորդ ամի թագաւորութեան նորա. նորին բարձու հրամանաւ որ երթեալ էր բոլոր զօրութեամբ իւրով ի նահանգին Բոլոնիա ի պատերազմ և անդ իսկոյն առեալ զկամենից գլեհացոց, զրուսաց և զհայոց եկեղեցիսն դարձոյց ի մզկիթ ըստ սովորութեան իւրեանց և զբոլոր բնակիչսն արար հարկատու. իսկ ոմանք երևելիք ի հայոց խորհուրդեամբ ի միջի իւրեանց չոքան ընդ բանակին Անդրիանուպոլիս և մնացեալքն յազգէն հայոց հանդերձ պարագայիքն իւրեանց հրամանաւ արքունի յեգերս Սպիտակ ծովուն իջուցեալ և անդ ի յերիս նաւս բաժանեալ՝ յուղի արկին յարեւելս կոյս Միջերկրական ծովուն։ Վասն որոյ անկեալ սոցա առաջի փրկութեան մին էհաս ի Ղալաթիա Կոստանդինուպոլսոյ[1] և միւսն յեգերս Սեաւ ծովու հանդէպ Ահիոլու Պարգազու ի բերդն Սիւզէպոլսոյ. իսկ երրորդն յանդիման Պոնտոսի ի հարաւակողմն պատահեալ անհնարին ալէկոծութեան ի քայքայելն ի բոնութեան հողմոց իննսուն և եօթն հոգիք թօթափեալ ի ջուր զրաւեցան ի կենաց աստի։ Ապա զայսոսիկ ամենայն իբրև լուաւ ընդ այն ժամանակս պէլրատսի Աբրահամ Զէլէպին (անուանեալ Ապրօ Զէլէպի) որ ընդ նմին միջոցին յարքունի դրան կայր վաճառականութեան աղագաւ. առաւել ի սիրտ խոցեալ զանհնարին կիրս կրէր յանձին վասն ժողովրդեան կամենացոց։

Ուստի կոչեալ առ ինքն զգլխաւորս ի ժողովրդէ աստի որ յԱնդրիանուպոլիս եկեալ էին ընդ բանակին, և մխիթարեալ զնոսա ետ չորեք հարիւր մառչիլ յղեալ առ այն վտարանդեալ ժողովուրդն զոր և առեալ ծանօթացեալքն Աբրահամ Զէլէպւոյն՝ յղեցին եթէ առ Ղալաթիա և եթէ առ Սիւզէպոլիս եղեալ վտարանդեալ ժողովուրդսն, առ որս ապա յայսմ վայրի հրաման էհաս ի թագաւորէն թէ որքան և ուր ուրեք գտանիցին յազգէն Հայոց ժողովուրդք զամենեցուց. երթեալք ի Մակեդոնիա քաղաք գտցեն զտեղի բնակութեան իւրեանց և անդ առցեն զկայ։ Ապա սակաւ ինչ շունչ առեալ յոգնութեան Աբրահամ Զէլէպւոյն, որպէս ասացաք վերականգնեցաւք իւրեանց եկեալ հասին ի Փիլիպուպոլիս և անդ տեսեալ զմիմեանս յարտասուս ցնդէին վասն կրեալ տառապանաց և ազգի ազգի վշտակրութեանց իւրեանց որ էհաս ի վերայ նոցա. և իբրև այն ինչ ի հանդարտել էին, եկն յԱստուծոյ առ նա տարաժամ մահս վրիժառու Աստուածային բարկութեան որ ոչ լուեալ և տեսեալ էին բնաւ. որ ևս զբազումս յազգաց ամենից իբրև զգերանդի հնձեալ արմատոց կենաց եբարձ ի վշտաց աստի անկայուն կենցաղոյս և սակս որոյ վերստին անկանի ի սուգ տրտմութեան։

Այլ աստէն վերստին օգնական գտաւ Աբրահամ այսմ ժողովրդեան. զի գնացեալ ոմանք ի սոցունց գլխաւորաց ի Անդրիանուպոլիս առ դուռն արքունի խնդրեալ ինքնեանց զաղօթարան իմն արքայական հրամանէ զոր անդ ուրեմն յուսացնէր նոցա Աբրահամ Զէլէպի զկերպ խընդրանաց գրոյն և զորպէսն շարժելուին ինքնեանց, ընդ որս խնդրէր անձամբ և զաղաչանքս մատուցանէր երևելեաց տան։

Ապա մինչ հրաման եղև յարքայէն տալ ի Փիլուպուպոլիս մինն յութից եկեղեցեաց յունաց՝ ազգին հայոց, չոքան հրամանաւ այնու և ուրախութեամբ մեծաւ ի Փիլիպուպոլիս թէպէտ և չտալ երևցուցին յոյնք զեկեղեցին. սակայն վասն հրամանին և իրաւանց առին զեկեղեցին՝ որ կառուցեալ յանուն Սրբոյն Գէորգայ։

Ապա յորժամ տեսին թէ ունի զեկեղեցին զկարօտութիւն նորոգման՝ ըստ ամենայնի. վասն որոյ յորժամ լուաւ Աբրահամ Զէլէպին, եթէ բանիւ և եթէ գրով յանձն էառ վճառել որքան որ գնած է ի պէտս շինութեան Եկեղեցւոյ՝ անձին իւրոյ ի յիշատակ յաւիտենական և սակաւ ինչ փող ևս յղեաց զսկիզբն առնել շինութեան. ասուի սկիզբն արարին նորոգել բանիւն յուսադրութեան Աբրահամ Զէլէպւոյն։ Բայց ի յայսմ հոգևոր ուրախութեան պարապիլն էհաս անդարձ հրամանն վերին՝ փոխել յաստեայց Աբրահամ Զէլէպւոյն յանանց կեանսն, զի հանգեաւ ի Տէր հաստատական անուամբ յիսուն և հինգ ամաց, ի թուականութեան հայոց հազար հարիւր քսան և հինգ և եղաւ ի տապանի յԱնդրիանուպոլիս։ Այլ որդին Սարգիս Զէլէպի ոչ գտաւ առընթեր զի յղեալ էր յԻտալիա վաճառականութեամբ։

Եւ երկրորդ որդին Պարոն Մատթէոս Զէլէպի

1. Ասիկա համառօտագրին սխալն է. սև ծովուն տեղ Սպիտակ և Միջերկրական ծով կը գրէ։ Իսկ Ղալաթիան Պուրկազի մօտ գտնուող Սև ծովու վրայ, ուրիշ Ղալաթիա մըն է։